Հավանության է արժանացել
մանկավարժական խորհրդի
18.03. 2020թ. թիվ 06
արտահերթ նիստում

Տնօրեն՝ Ք. Ահարոնյան

Հաստատվել է հաստատության
խորհրդի 04.05.2020թ.
թիվ 03 նիստում

Նախագահ՝ Ա. Եսայան

ԿԱՐԳ

ՀՀ ԿԳՄՄՆ ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կարգով սահմանվում է ՀՀ ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի գործունեության ներքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը:

1.2 Ուսումնարանի գործունեության ներքին գնահատման գործառույթները կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կարգով և այլ իրավական ակտերով:

1.3 Ներքին գնահատումն իրականացնում է Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանը:

1.4 Ներքին գնահատումն իրականացվում է սույն կարգով սահմանված հարցաշարերի հիման վրա, որոնք ներառում են սույն կարգով սահմանված չափանիշները, ինչպես նաև գնահատման միավորները:

2. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Ուսումնարանի գործունեության ներքին գնահատման նպատակն է՝

2.1.1 Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում /այսուհետ՝ Ուսումնարան/ իրականացվող ծառայությունների մատուցման և կրթության որակի բարելավմանը, նաև արդյունավետության բարձրացմանը նպաստելը,

2.1.2 շահառուների՝ ուսանողների և նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների), ուսումնարանի մանկավարժական կազմի, աշխատողների, համագործակցող կազմակերպությունների և գործատուների իրազեկվածության աստիճանի բարձրացումը,

2.1.3 Ուսումնարանի հաշվետվողականության մեխանիզմների արդյունավետության բարձրացմանը, գործունեության թափանցիկության ապահովմանը նպաստելը:

2.2 *Ուսումնարանի գործունեության ներքին գնահատման խնդիրներն են՝*

2.2.1 կրթական ծառայությունների որակի և արդյունավետության համեմատական գնահատումը, պետական կրթական չափորոշիչների պահանջներին շրջանավարտների համապատասխանության գնահատումը,

2.2.2 ուսումնական գործընթացի կազմակերպման պայմանների և դրանց բարելավմանն ուղղված աշխատանքների գնահատումը,

2.2.3 կրթական ծրագրերի իրականացման, դասավանդման մեթոդների և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետության գնահատումը,

2.2.4 կրթական ծառայությունների որակի համապատասխանության և կրթական գործընթացի արդյունավետության մասին կրթական գործընթացի մասնակիցներին և հասարակությանն իրազեկումը,

2.2.5 Ուսումնարանի զարգացման ուղղությունների նախանշման, զարգացման ծրագրերի մշակման, իրականացման գնահատումը,

2.2.6 ներքին գնահատման գործընթացին հասարակայնության ներգրավումը:

3. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

3

3.1 *Ներքին գնահատումն Ուսումնարանի կողմից իր գործունեության վերլուծությունն է:*

3.2 *Ներքին գնահատումն իրականացվում է տարեկան մեկ անգամ՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը: Ներքին գնահատմանը մասնակցում են ուսումնական հաստատության վարչական և մանկավարժական աշխատողները, ուսանողները և նրանց ծնողները (օրինական ներկայացուցիչները):*

3.3 *Ներքին գնահատման հաշվետվությունն Ուսումնարանի տնօրենը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 10-ը ներկայացնում է ուսումնական հաստատության խորհրդին, մանկավարժական, ծնողական, ուսանողական և այլ գործող խորհուրդներին, ինչպես նաև երկշաբաթյա ժամկետում ապահովում դրա հրապարակումը Ուսումնարանում (տեսանելի տեղում) և (կամ) հաստատության պաշտոնական կայքում:*

3.4 *Ներքին գնահատումն իրականացվում է Ուսումնարանի տնօրենի հրամանով ձևավորված հանձնաժողովի կողմից*

3.4.1 հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Ուսումնարանի կոլեգիալ կառավարման մարմնի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամ ուսանող՝ առնվազն մեկ, մանկավարժական կազմի առնվազն երկու /հաստատության Խորհրդի կազմում չընդգրկված առնվազն մեկ/, մեթոդական միավորման նախագահներ, տնօրենի տեղակալներ,

3.4.2 տնօրենը հանձնաժողովի նախագահն է և ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը,

3.4.3 հանձնաժողովը հաստատում է իր աշխատակարգը, սահմանում ներքին գնահատում անցկացնելու գործողությունների ծրագիրը

3.4.4 ներքին գնահատման արդյունքում հանձնաժողովի նախագահի տեղակալը նախապատրաստում է ներքին գնահատման հաշվետվությունը:

4 ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4.1 *Ուսումնարանի գործունեության ներքին գնահատման չափանիշներն են՝*

4.1.1 *Ուսումնարանը պահպանում է շենքի և տարածքի անվտանգ շահագործումը.*

ա. Ուսումնարանի տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար,

բ. Ուսումնարանն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից,

գ. արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ Ուսումնարանի շենքին,

դ. Ուսումնարանի տարածքը մաքուր է, իսկ լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները, աղբը կանոնավորապես հավաքվում են հատուկ աղբարկղերում և դուրս են բերվում հաստատության տարածքից,

ե. Ուսումնարանի ամբողջ տարածքում պարբերաբար իրականացվում են միջոցառումներ՝ կրծողների և վտանգավոր միջատների, թափառող շների, կատուների և այլ կենդանիների դեմ.

4.1.2 *Ուսումնարանում պահպանված են սովորողների ու աշխատակազմի համար ուսումնական գործընթացի և աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ անվտանգության ու սանիտարահիգիենիկ նորմերը, կազմակերպված են առողջության պահպանման համապատասխան ծառայություններ.*

ա. Ուսումնարանի շենքը վերանորոգված է,

բ. Ուսումնարանի շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմերին,

գ. շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր,

դ. Ուսումնարանն ապահովված է կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգով,

ե. շենքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք հարթակներ, լայն դռներ, վերելակ և այլն),

զ. Ուսումնարանն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով,

է. Ուսումնարանում ոչ կառուցվածքային վտանգներ չկան,

ը. համակարգչային սարքավորումները, հեռուստացույցներն ամուր են տեղադրված և ամրացված են աշխատատեղերին,

թ. անիվներով տեղաշարժվող ծանր իրերն ամրացված են հատակին,

ժ. բաց դարակներից հեռացված են ծաղկամանները, նկարները, դեկորատիվ իրերը,

ժա. Ուսումնարանի միջանցքների հատակները սայթաքուն չեն, իսկ եթե սայթաքուն են ծածկված են ուղեգորգերով, ապա դրանք ամրացված են հատակին,

ժբ. Ուսումնարանի կահույքը համապատասխանում է անվտանգ կենսագործունեության պահանջներին, ամուր և բարվոք վիճակում է,

ժգ. Ուսումնարանում մշակված և առկա է սովորողների ու անձնակազմի տարհանման պլան, որում հաշվի են առնված նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները,

ժդ. Ուսումնարանի նախասրահում, բոլոր հարկերում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցասլաքներով,

ժե. Ուսումնարանի տարհանման ուղիներն ազատ են ավելորդ իրերից և արգելափակված չեն ծանր իրերով,

ժզ. Ուսումնարանում սովորողների թիվը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տարածքների հաշվարկման

նվազագույն նորմատիվներին և հաստատության լիցենզիայով սահմանված սահմանային տեղերին,

ժէ. դասասենյակներում և արհեստանոցներում նստարանների թիվը և դրանց միջև հեռավորությունը համապատասխանում են առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերին,

ժը. Ուսումնարանի սովորողները «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացներն անցկացնում են մարզադահլիճում.

4.1.3 *Ուսումնարանն իրականացնում է ուսուցողական ծրագրեր, որոնք ուղղված են սովորողների շրջանում անվտանգ կենսագործունեության և առողջ ապրելակերպի կարողությունների ու հմտությունների ձևավորմանը.*

ա. Ուսումնարանի անձնակազմը և սովորողները տիրապետում են արտակարգ իրավիճակներում գործելու վարքականոններին,

բ. Ուսումնարանի անձնակազմը և սովորողները տեղեկացված են հաստատությունում առկա անվտանգության միջոցների (էլեկտրական վահանակ, հրշեջ-տեղեկատու, հրշեջ-ծորակ և այլն) գտնվելու տեղերի վերաբերյալ ու տիրապետում են դրանց օգտագործման կանոններին,

գ. Ուսումնարանում իրականացվում են տեղական վտանգների գնահատման և աղետներին պատրաստվածության վերաբերյալ տարաբնույթ միջոցառումներ,

դ. Ուսումնարանում առկա է աղետներին պատրաստվածության, քաղաքացիական պաշտպանվածության պլան, և ուսումնական տարվա ընթացքում գործարկվում է պլանը, իրականացվում են վարժանքներ, վարվում է գրանցամատյան,

ե. Ուսումնարանը ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով,

զ. Ուսումնարանի բոլոր դասասենյակներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ, և ջեռուցման ամիսներին դասասենյակներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին,

է. Ուսումնարանի միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին,

ը. Ուսումնարանն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով,

թ. Ուսումնարանի բոլոր հարկերում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ՝ տղաների և աղջիկների համար,

ժ. Ուսումնարանի բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և հիգիենայի պարագաներով (օճառ, թուղթ և այլն),

ժա. հաշմանդամություն ունեցող անձանց համար կա հարմարեցված սանհանգույց, որի մոտ առկա է հաշմանդամության տարբերանշանը,

ժբ. Ուսումնարանում առկա է սննդի կետ, որը համապատասխանում է սանիտարահիգիենիկ պայմաններին,

ժգ. Ուսումնարանի սննդի կետում փակցված են առողջ սննդակարգի վերաբերյալ համապատասխան պաստառներ,

ժդ. Ուսումնարանում առկա է բուժկետ, և կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն.

4.1.4 *Ուսումնարանն իրականացնում է սովորողների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ.*

ա. Ուսումնարանում իրականացվում են ծրագրեր՝ ալկոհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելելու համար,

բ.. Ուսումնարանում գործում են սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմներ,

գ. Ուսումնարանն իրականացնում է ուսանողի խնամքի ու դաստիարակության, ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության բարձրացման, ինչպես նաև բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման բացառման, ուսանողի զարգացման համար անվտանգ միջավայրի ձևավորման հարցերի վերաբերյալ ծնողների իրազեկման միջոցառումներ,

դ. Ուսումնարանում կազմակերպվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումներ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիների և կանխարգելման մասին գիտելիքների մակարդակը բարձրացնելու նպատակով,

ե. Ուսումնարանը ստեղծում է ուսումնամեթոդական նյութեր և կազմակերպում է միջոցառումներ՝ ուղղված բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեմ.

4.1.5 Ուսումնարանն ապահովում է սովորողների առաջխաղացումը և բարձր առաջադիմությունը.

ա. սովորողների միջին տարեկան գնահատականները՝ ըստ կուրսերի,

բ. գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ,

գ. ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կուրսերի,

դ. ավարտման գործակիցը՝ ըստ կուրսերի,

ե. ավարտական քննություններից անբավարար ստացած շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ,

զ. Պետական որակավորման քննությունները չհանձնած ուսանողների թիվը

է. բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունված շրջանավարտների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի համեմատ,

ը. սովորողների բացակայությունների ընդհանուր թիվը՝ ժամերով՝ ըստ կուրսերի,

թ. ուսումնական տարվա ընթացքում Ուսումնարանից այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվը և տոկոսը, այդ թվում՝ այլ հաստատություններ, այլ բնակավայր կամ այլ երկիր ընտանիքի տեղափոխման պատճառով,

ժ. ուսումնական տարվա ընթացքում ուսումն ընդհատած (անավարտ թողած) սովորողների ընդհանուր թիվը, այդ թվում՝ հիվանդության, անկարողության, ընտանիքի սոցիալական վիճակի, սովորել չցանկանալու և այլ պատճառներով,

ժա. մարզային, հանրապետական, միջազգային մարզական, մասնագիտական մշակույթի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթների մասնակիցների թիվը և տոկոսը՝ հաստատության սովորողների ընդհանուր թվի համեմատ,

ժբ. մարզային, հանրապետական, միջազգային մարզական, մասնագիտական, մշակույթի ոլորտում ստեղծագործական և կատարողական մրցույթներում մրցանակներ ստացած սովորողների թիվը և տոկոսը՝ մասնակիցների ընդհանուր թվի համեմատ.

4.1.6 Ուսումնարանն ունի որակյալ դասախոսական անձնակազմ, որոնք տիրապետում են դասավանդման ժամանակակից մեթոդներին.

ա. բարձրագույն մանկավարժական կրթություն ունեցող դասախոսների թիվը և տոկոսը,

բ. Բարձրագույն մասնագիտական որակավորում ունեցող վարպետներ և հատուկ մասնագիտական դասավանդողներ դասախոսների թիվը և տոկոսը

գ. ըստ մասնագիտության դասավանդող դասախոսների թիվը և տոկոսը,
դ. տարակարգ ունեցող դասախոսների թիվը և տոկոսը,
ե. գիտական կոչում ունեցող դասախոսների թիվը և տոկոսը,
զ. նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում
է. վերապատրաստում անցած դասախոսների թիվը և տոկոսը,
ը. որպես ուսուցիչ/դասախոս վերապատրաստող, վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող դասախոսների թիվը և տոկոսը,
թ. դասախոսների միջին տարիքը,
ժ. միջազգային ու հանրապետական պարբերականներում (ամսագրերում) հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ ունեցող դասախոսների թիվը և տոկոսը,
ժա. դասավանդման ուսանողակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող դասախոսների թիվը և տոկոսը՝ տոկոսային արտահայտությամբ,
ժբ. ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ինտերնետ կիրառող դասախոսների թիվը,
ժգ. սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող դասախոսների թիվը,
ժդ. դասախոսների բացակայությունների ընդհանուր թիվը,
ժե. ուսումնական տարվա ընթացքում հաստատությունում անցկացվող ցուցադրական բաց դասերի թիվը,
ժզ. ուսումնական տարվա ընթացքում դասախոսների փոխադարձ դասալսումների թիվը,
ուսումնական տարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվող գործնական պարապմունքների թիվը,

4.1.7 *Ուսումնարանում ստեղծված է որակյալ կրթական միջավայր.*

ա. Ուսումնարանն ունի գործող գրադարան, որը հագեցած է ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով: Գրադարանից կանոնավոր կերպով օգտվում են սովորողները, դասախոսները և վարչական կազմը,
բ. Ուսումնարանն ունի ուսումնական լաբորատորիաներ ու կաբինետներ, այդ թվում՝ քիմիայի, ֆիզիկայի, , ռազմագիտության, համակարգչային և այլն, ինչպես նաև արհեստանոցներ, մարզադահլիճ, միջոցառումների անցկացման դահլիճ և այլ հատուկ ուսումնական լսարաններ, այդ թվում՝ արտադպրոցական կրթության և լրացուցիչ կրթական ծրագրերի համար, որոնք հագեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով, ուսումնանյութական և ուսումնադիդակտիկ նյութերով.

4.1.8 *Ուսումնարանի մարդկային, ֆինանսական և նյութական ռեսուրսները տնօրինվում են արդյունավետ, և հաստատությունը կարողանում է ներգրավել լրացուցիչ միջոցներ.*

ա. ուսանող - դասախոս հարաբերությունը,
բ. ուսանող – սպասարկող - վարչական անձնակազմ հարաբերությունը,
գ. կուրսերի միջին խտությունը,
դ. մեկ ուսանողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը,
ե. դասախոսի միջին աշխատավարձը,
զ. վարչական աշխատողների միջին աշխատավարձը,

է. սպասարկող կազմի միջին աշխատավարձը,
ը. հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը,
թ. հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը,
ժ. աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը,
ժա. կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը,
ժբ. նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռքբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը.

4.1.9 *Ուսումնարանի* ուսանողների և տնօրինության համագործակցությունը, ուսանողների մասնակցությունը հաստատության գործունեությանը.

ա. տնօրինությունը խթանում է ուսանողների նախաձեռնությունները, օժանդակում դրանց իրագործմանը,
բ. ուսանողների մասնակցությունն իրենց վերաբերող խնդրահարույց հարցերի վերաբերյալ տնօրինության կողմից որոշումների ընդունմանը, նման դեպքերի թիվը և մասնակցություն ունեցած ուսանողների տոկոսը,
գ. ուսանողների կողմից առաջարկված նոր նախաձեռնությունները և դրանց թիվը, նախաձեռնություններին մասնակցություն ունեցած ուսանողների տոկոսը,
դ. ուսանողների կողմից կազմակերպված միջոցառումները և դրանց թիվը, միջոցառումներին մասնակցություն ունեցած ուսանողների տոկոսը,
ե. ուսանողների մասնակցությունը հաստատության ներքին կարգապահական կանոնների մշակմանը, մասնակցություն ունեցած ուսանողների տոկոսը,
զ. իրենց հուզող հարցերի վերաբերյալ ուսանողների կողմից կազմակերպված համաժողովները, սեմինարները, կլոր սեղանները, քննարկումները, դրանց թիվը և մասնակցություն ունեցած ուսանողների տոկոսը,
է. ուսանող - ուսանող և ուսանող - դասախոս հարաբերություններն Ուսումնարանում.

4.1.10 *Ուսումնարանում գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան ուսանողական խորհուրդ, որի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում են ուսանողների կարիքները: Ուսումնարանի ուսանողական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի, ուսանողների, ծնողների և տնօրինության փոխադարձ վստահության ու աջակցության մթնոլորտում, իրականացնում է հանրօգուտ աշխատանք.*

ա. ուսանողական խորհրդի նախաձեռնած քայլերը՝ ուղղված ուսման մեջ կամ այլ հարցերում խնդիրներ ունեցող ուսանողներին աջակցելուն,
բ. ուսանողական խորհրդի ձեռնարկած միջոցները՝ ուսանողների միջև ծագած վեճերին և խնդիրներին լուծում տալու նպատակով,
գ. ուսանողական խորհրդի նախաձեռնած միջոցառումները՝ ներառյալ կազմակերպված շաբաթօրյակները, հաստատության և ուսումնարանամերձ տարածքի մաքրման աշխատանքները, դրանց հաճախականությունը և մասնակից ուսանողների տոկոսը,
դ. ուսանողական խորհրդի գործունեության համապատասխանությունը ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին.

4.1.11 *Ուսումնարանի ծնողական խորհուրդը սերտ համագործակցում է տնօրինության և ուսանողական խորհրդի հետ, նպաստում ուսանողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին.*

ա. ուսանողների ուսումնադաստիարակչական գործընթացի վերաբերյալ ծնողական խորհրդի կողմից տնօրինությանը ներկայացված առաջարկությունները, դրանց թիվը և ընդունված առաջարկությունների տոկոսը ներկայացվածի նկատմամբ,

բ. ծնողական խորհրդի կողմից կազմակերպված միջոցառումները (հանդեսներ, հավաքներ, երեկույթներ, էքսկուրսիաներ, ճանաչողական այցեր և այլն), դրանց թիվը, մասնակից ծնողների թիվը և ուսանողների տոկոսը,

գ. ծնողական խորհրդի կողմից դասախոսներին խրախուսելու, նրանց նկատմամբ կարգապահական կամ այլ տույժեր կիրառելու վերաբերյալ և նմանատիպ առաջարկությունները, դրանց թիվը,

դ. ծնողական խորհրդի հանդիպումների հաճախականությունը և դրանց ընթացքում քննարկված հարցերի շրջանակները,

ե. ծնողական և ուսանողական խորհուրդների համագործակցությունը և դրա ձևերը,

զ. Ուսումնարանի առօրյայից և տեղի ունեցող իրադարձություններից ծնողների տեղեկացվածության աստիճանը,

է. ծնողների ներգրավվածությունը ուսանողների արտաուսումնարանային և արտալսարանային աշխատանքներում, ներգրավվածության ձևերը, նման աշխատանքներում ընդգրկված ծնողների տոկոսը,

ը. այն ծնողների տոկոսը, ովքեր օգտվում են http://www.ktak.am, http://www.armedu.am, http://forum.armedu.am, http://lib.armedu.am և այլ կրթական կայքերից, ինչպես նաև հաստատության կայքից.

4.1.12 *Ուսումնարանն ու համայնքը համագործակցում են, և Ուսումնարանը վարում է ակտիվ հասարակական կյանք.*

ա. Ուսումնարանի շենքային պայմանների բարելավման, տարածքի բարեկարգման, ուսումնանյութական բազայի համալրման և այլ աշխատանքներին համայնքի մասնակցությունը, այդ գործում կատարված ներդրումները,

բ. համայնքային հիմնախնդիրների վերաբերյալ ուսանողների տեղեկացվածությունը և նրանց մասնակցությունը համայնքի աշխատանքներին, մասնակցության ձևերը, մասնակցություն ունեցած ուսանողների տոկոսը,

գ. Ուսումնարանի կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպված ու անցկացված միջոցառումները և դրանց թիվը, մասնակից ուսանողների տոկոսը և համայնքի ներկայացուցիչների թիվը,

դ. Ուսումնարանի կողմից հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացված կրթական ծրագրերը, դրանց թիվը և մասնակից ուսանողների թիվը՝ ըստ ծրագրերի.

4.1.13 Ուսումնարանում ԿԱՊԿ ունեցող անձանց համար հավասարության ապահովում.

ա. ԿԱՊԿ ունեցող անձանց զարգացումը, որպես նպատակ ամրագրված է հաստատության զարգացման ծրագրում,

բ. Ուսումնարանի զարգացման ծրագրում պլանավորված են ԿԱՊԿ ունեցող անձանց ապահովման համապատասխան միջոցառումներ, այդ թվում՝ դասախոսների վերապատրաստումներ,

գ. Ուսումնարանի տնօրենն ունի ԿԱՊԿ ունեցող անձանց գործընթացի համակարգման լիազորություններով օժտված տեղակալ (կամ այն պատվիրակված է տեղակալներից որևէ մեկին),

դ. Ուսումնարանն իրականացնում է ուսանողների հավասար իրավունքներին, հանդուրժողականությանը նվիրված և նման այլ ուսումնական ծրագրեր.

4.1.14 Ուսումնարանի աշխատակազմն արդիականացնում է իր գիտելիքներն ու հմտությունները ներառական կրթության ոլորտում.

ա. Ուսումնարանն ունի ներառական կրթության թեմաներով վերապատրաստված և վերապատրաստվող դասախոսներ,

բ. Վերջին հինգ տարում ներառական կրթության թեմաներով վերապատրաստում անցած դասախոսների թիվը.

4.1.15 Ուսումնարանն ունի ռեսուրսներ՝ աջակցելու ԿԱՊԿ ունեցող ուսանողների սովորելուն, և ուսումնական միջավայրը հարմարեցված է նրանց կարիքներին.

ա. Ուսումնարանում տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձանց համար ապահովված է ֆիզիկական մատչելիություն,

բ. Ուսումնարանն ունի ԿԱՊԿ ունեցող ուսանողների հոգեբանամանկավարժական աջակցության թիմ (հատուկ մանկավարժ, հոգեբան և այլն),

գ. ԿԱՊԿ ունեցող ուսանողներն ապահովված են դասագրքերով, գրենական պիտույքներով, հարմարանքներով, այլ պարագաներով,

դ. Ուսումնարանի լսարանների դասավորվածությունն այնպիսին է, որ ԿԱՊԿ ունեցող ուսանողները մեկուսացված չեն,

ե. Ուսումնարանում հաղթահարված են ներառականությունը խաթարող ֆիզիկական խոչընդոտները (թեքահարթակ, հենակ և այլն),

զ. Ուսումնարանում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտները (վերաբերմունք, կարծրատիպ).

4.1.16 դասախոսները կարողանում են ուսումնական ծրագիրը, դասի պլանը, ուսուցանման գործընթացը հարմարեցնել ԿԱՊԿ ունեցող երեխաների կարիքներին և մշտապես խրախուսում են նրանց.

ա. այն դասախոսների թիվը, ովքեր ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ,

բ. դասախոսները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր,

գ. դասախոսներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր սովորողների նկատմամբ՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից,

4.1.17 ԿԱՊԿ ունեցող ուսանողները հավասարապես մասնակցում են ուսումնարանի և դասի բոլոր գործընթացներին՝ ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի.

ա. ուսումնական հաստատության այն ուսանողների թիվը և տոկոսը, ովքեր ունեն ԿԱՊԿ,

բ. ԿԱՊԿ ունեցող ուսանողների բացակայությունների տարեկան միջին թիվը՝ ժամ/սովորող,

գ. ուսումնական հաստատության ուսանողական խորհրդում ԿԱՊԿ ունեցող ուսանողների թիվը.

4.1.18 ուսումնական հաստատության ուսանողները գիտակցում են ԿԱՊԿ ունեցող իրենց ընկերների նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացման անհրաժեշտությունը և օգնում են փոխել դրանք.

ա. ԿԱՊԿ ունեցող սովորողների նկատմամբ հանդուրժողականության ձևավորմանն ուղղված աշակերտական նախաձեռնությունների թիվը և ձևերը,

4.1.19 ուսումնական հաստատությունում ապահովված է սեռերի և ազգային փոքրամասնությունների ուսանողների միջև հավասարությունը.

ա. սեռերի հավասարության գործակիցը,

բ. ուսանողական խորհրդում սեռերի հավասարության գործակիցը,

գ. գերազանց տարեկան առաջադիմություն ունեցող տղաների թվի հարաբերությունը գերազանց տարեկան առաջադիմություն ունեցող աղջիկների թվին,

դ. տղաների տարեկան միջին բացակայությունների թվի հարաբերությունն աղջիկների տարեկան միջին բացակայությունների թվին (ժամերով),

ե. ուսումնական հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների ուսանողների թիվը և տոկոսը,

զ. ուսանողական խորհրդի անդամ ազգային փոքրամասնությունների ուսանողների թիվը,

է. ուսումնական հաստատության կողմից իրականացված՝ ներառական կրթությանն առնչվող արտալսարանային միջոցառումների (զրույցներ, կինոնկարների դիտում, քննարկումներ, կլոր սեղաններ, սեմինարներ, էքսկուրսիաներ և այլն) թիվը՝ ըստ կուրսերի: